



ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱՄԱՆՈՒՆՉՈՒՄ Ա. (ԳԻՐՔ ՍՆՆԴՈՑ ԻԳ.)¹

Աստվածաշունչ մատյանն աշխարհի ամենաուսումնասիրված, ամենաշատ հրատարակված եւ մեծագույն տարածում ունեցող գիրքն է, որ թարգմանվել է հազարավոր լեզուների՝ հասանելի դառնալով հնարավորինս մեծ թվով մարդկանց եւ ուսուցանելով փրկության ճանապարհն ու Աստու խոսքը²: Այս ծավալուն հատորը ներառում է մարդու գործունեության այլեւայլ բնագավառներին անդրադարձող պատմություններ, որոնք հոգեւոր-կրոնական գիտելիքներ հաղորդելուց, ճիշտ եւ խոտելի ուղիները մատնանշելուց բացի՝ օգտակար եւ ուսանելի են նաեւ կյանքի տարբեր ոլորտների համար: Ի թիվս այլոց, Սուրբ Գրքում նաեւ դիվանագիտական-բանակցային գործընթացին աղերսվող դրվագներ կարելի է գտնել: Օրինակ՝ ուշագրավ դեպք է Ծննդոց ԻԳ. գլխի նկարագրությունը, երբ ներկայացվում է, թե ինչպես է Աբրահամ նահապետը բանակցում Սահառի որդի Եփրոնի հետ «զույգ քարայրի» կապակցությամբ:

¹* Ստացվել է՝ 6.12.2025, գրախոսվել է՝ 6.01.2026: էլ. հասցե՝ arshak.madoyan@ysu.am:

² Ամբողջական թարգմանություն կատարվել է 776 լեզվով՝ հասանելի 6,2 մլրդ մարդու, իսկ նոր կտակարանը թարգմանված է 1798 լեզվով, հասանելի 887 միլիոնի. տես <https://wycliffe.net/global-scripture-access/>, լեզուների թվարկումն ու Սուրբ Գրքի թարգմանության առկայությունն ստուգելու համար հմմտ. <https://www.ethnologue.com/guides/how-many-languages-unwritten/>, հմմտ. նաեւ D. DANIELL, The Bible in English: Its History and Influence, New Haven—London, 2003, էջ 1–5, B. M. METZGER, M. D. COOGAN, The Oxford Companion to the Bible, Oxford, 1993, էջ 66, J. BARTON, A History of the Bible, London, 2019, էջ 3–7, E. A. NIDA, Bible Translating: An Analysis of Principles and Procedures, Leiden, 1961, էջ 12–18, «United Bible Societies, Scripture Language Report», Oxford, 2023, էջ 4–6, UNESCO, Index Translationum: World’s most translated books database, Paris, 2022, s.v. “Bible”, Б. М. МЕЦГЕР, Введение в Новый Завет, Москва, 1997, էջ 15–18, Священное Писание в мировой культуре, под ред. В. П. Кузнецова, Москва, 1998, էջ 5–9, Ю. А. НИДА, Теория и практика перевода Библии, Санкт-Петербург, 1998, էջ 11–16:

«Եւ եղեն կեանք Սառայի հարիւր եւ քսան եւ եւթն ամ: Եւ մեռաւ Սառայ ի քաղաքի Արբոկայ ի ձորն, այն ինքն է Քեբրոն յերկրին Քանանացւոց: Եւ եկն Աբրաամ կոծել զՍառայ եւ սուգ առնուլ: Եւ յարեաւ Աբրաամ ի մեռելոյն իւրմէ, եւ խօսեցաւ ընդ որդիսն Քետեայ՝ եւ ասէ. «Պանդուխտ եւ նժդեհ եմ ես ի միջի ձերում. արդ՝ տո՛ւք ինձ ստացուած գերեզմանի ընդ ձեզ եւ թաղեցից զմեռեալս իմ»: Պատասխանի ետուն որդիքն Քետայ Աբրաամու՝ եւ ասեն. «Ո՛րնկն դիր մեզ տէր, թագաւոր յԱստուծոյ ես ի միջի մերում, յընտիր շիրմաց մերոց թաղեա՛ զմեռեալն. զի ոչ ոք ի մէնջ արգելու ի քէն զշիրիմս»: Յարեա՛ւ Աբրաամ երկիր եպագ ժողովրդեան երկրին որդւոցն Քետայ: Եւ խօսեցաւ ընդ նոսա Աբրաամ՝ եւ ասէ. «Եթէ յօժար իցէք ի մտի ձերում թաղել զմեռեալդ իմ յերեսաց իմոց, ո՛րնկն դիք ինձ, եւ խօսեցարո՛ւք վասն իմ ընդ Եփրոնի որդւոյ Սահառայ, եւ տացէ ինձ զայրն կրկին, որ է ի վիճակի ազարակի իւրոյ, արծաթոյ՝ որչափ եւ արժան իցէ. տացէ՛ զնա ինձ ի միջի ձերում ի ստացուած բնակաց»: Եւ Եփրոն նստէր ի մէջ որդւոցն Քետայ: Պատասխանի ետ Եփրոն Քետացի Աբրաամու՝ եւ ասէ. «Լո՛ւ ի լու որդւոցն Քետայ, եւ ամենեցուն որ մտանէին ընդ դուռն քաղաքի նորա»: Եւ ասէ. «Յի՛ն դարձ տէր. եւ ո՛րնկն դիր ինձ. զազարակն ետու քեզ, եւ զայրն որ ի նմա տաց քեզ առաջի ամենայն քաղաքակցաց իմոց ետու քեզ թաղել զմեռեալն քո»: Եւ երկիր եպագ Աբրաամ առաջի ամենայն ժողովրդեան երկրին, եւ խօսեցաւ ընդ Եփրոնի յականջս ժողովրդեան երկրին, եւ ասէ. «Որովհետեւ անսացեր ինձ, ո՛րնկն դիր ինձ. տաց քեզ արծաթ ընդ ազարակին, ա՛ն յինէն եւ թաղեցից անդ զմեռեալս»: Պատասխանի ետ Եփրոն Աբրաամու՝ եւ ասէ ցնա. «Ո՛չ, տէր իմ. լուայ թէ գետինն չորեքհարեւր սատեր արծաթոյ է, ընդ իս եւ ընդ քեզ զի՛նչ է այն. բայց դու թաղեա՛ զմեռեալն քո»: Եւ իբրեւ լուաւ Աբրաամ յԵփրոնէ, կշռեաց զարծաթն Եփրոնի, զոր խօսեցաւն յականջս որդւոցն Քետայ, չորեքհարեւր սատեր արծաթոյ ընտրոյ վաճառականաց: Եւ հաստատեցաւ ազարակն Եփրոնի, որ է առ կրկնով այրին յանդիման Մամբրէի, ազարակն եւ այրն որ է ի նմա. եւ ամենայն ծառատունկ որ է յազարակի անդ, շուրջ յամենայն սահմանս նորա, ի ստացուածս Աբրաամու առաջի որդւոցն Քետայ, եւ որ մտանէին ընդ դուռն քաղաքի նորա: Եւ յետ այնորիկ թաղեաց Աբրաամ զՍառայ զկին իւր ի կրկնումն այրի ազարակին, որ է յանդիման Մամբրէի. այն է Քեբրոն յերկրին Քանանացւոց: Եւ հաստատեցաւ ազարակն եւ այրն որ է ի նմա՝ Աբրաամու, ի ստացուածս շիրմաց յորդւոցն Քետայ»:

Այստեղ առաջնայինը նկատվում է տուրեւառական բանակցութիւնը, որ հողակտորի գնման-վաճառքի նկարագրութիւնն է: Սակայն առավել ուշադիր դիտարկման պարագային կարող ենք նկատել նաեւ «բանակցային գործընթացի» մանրամասներ: Դրանք ի ցույց են դնում Աբրահամի այն նուրբ ձիրքը, որ այսօրվա ընկալումներով բնորոշելի է «գիվանագիտական» եզրով: Նախ՝ կարող ենք արձանագրել, որ բուն խնդիրը, որի շուրջ պետք է համաձայնութիւն ձեռք բերվի, Եփրոն Քետացու եւ Աբրահամ նահապետի միջեւ է: Սակայն, չնայած դեպքերի զարգացման սպասելի ընթացքն այն է, թե երկու կողմերն անմիջականորեն պիտի հանդիպեն եւ զրուցեն, տեսնում ենք, որ նահապետը ոչ թե անհապաղ հանդիպման է ձգտում, այլ սկսում է նախապատրաստել հակառակ կողմի հետ իր զրուցակցութիւնը՝ ձգտելով հնարավորինս նպաստավոր պայմաններ ստեղծել փոխըմբռնման հասնելու համար: Սուրբգրական հատվածում տեսնում ենք, որ Աբրահամը «գլուխ է խոնարհում» Քետի որդիների առջեւ՝ փորձելով ստանալ նրանց աջակցութիւնը եւ ըստ այդմ սկզբից ելեթ «բանակցային գործընթացը» դնելով իր համար ցանկալի հունի մեջ: Նա ասում է. «Բարեխոսեցէք Սահառի որդի Եփրոնին, որ ինձ տա իր ազարակի սահմաններում գտնվող զույգ քարայրն այնքան արծաթով, որքան այն արժե: Թող այն ձեր ներկայությամբ ինձ տա որպէս շիրմավայր»: Այստեղ «ձեր ներկայությամբ»-ը մերօրյա եզրով հավանաբար կարելի է պատկերացնել իբրեւ երաշխավորի կարգավիճակ, որովհետեւ, ինչպէս երեւում է բանակցութիւնների հետագա դրվագներից, երկու կողմերը լիակատար հարգանքով եւ վստահությամբ են իրար վերաբերվում, սակայն, այդուամենայնիվ, Աբրահամը տեղին է համարում նաեւ «երաշխավորների» հանգամանքի կիրառումը: Եւ շուտով ականատես ենք լինում, որ Աբրահամի առաջադրած պահանջ-ցանկութիւնն իրականանում է. «Եփրոնը քետացիների հետ նստած էր ժողովատեղում: Եփրոն Քետացին պատասխան տվեց Աբրահամին եւ ի լուր Քետի որդիների ու բոլոր նրանց, ովքեր մտնում էին նրա քաղաքի դարպասով, ասաց. «Նայիր ինձ, տէր, եւ լսիր ինձ: Ազարակը տալիս եմ քեզ, քեզ եմ տալիս նաեւ այնտեղ գտնվող քարայրը: Իմ բոլոր քաղաքացիների ներկայությամբ այն քեզ եմ հանձնում»: Այս հատվածի կապակցությամբ դիտելի է հետեւյալը. սուրբգրական մեկնութիւններից իմանում ենք, որ նվիրատվութեան կամ առք ու վաճառքի գործարքները ժամանակին իրականացվում էին «ամբողջ ժողովրդի կամ պատվիրակների» ներկայությամբ («երաշխավորների» հանգամանք),

ինչը դիտվում էր իբրև կայացած համաձայնության վավերացում: Սրա հետ մեկտեղ շեշտվում է, որ քաղաքների դարպասները հնագույն շրջանում ընկալվում էին որպես ատյան կամ պաշտոնական հավաքատեղի, կարեւոր որոշումների կայացման համար վայել ու պատշաճավոր վայր³: Սուրբգրական այս պատկերը այսօրվա դիվանագիտական ընկալումներով կարելի է դիտարկել իբրև բանակցությունների արդյունքում փոխադարձ համաձայնությամբ ստեղծված պայմանագրի կամ դաշնագրի վավերացում նաև «երրորդ կողմի ստորագրությամբ», ուր վերջինս հանդես է գալիս իբրև երաշխավոր⁴:

Դիվանագիտական տեսանկյունից ուշադրության արժանի է նաև այն, որ Եփրոնն Աբրահամին դիմում է «տե՛ր իմ» կապակցությամբ, իսկ Աբրահամի շուրթերից որևէ համարժեք ձեւակերպում չի հնչում⁵: Բայց սա հակված չենք դիտարկելու իբրև «դիվանագիտական վարվեցողության, վարքաձեւի» խախտում, որովհետեւ չնայած Սուրբ Գրքի հարգալից դիմելաձեւի վերաբերյալ որևէ գրառում չկա, սակայն դրա փոխարեն երկու անգամ հիշատակվում է, թե՛ «Աբրահամը գլուխ տվեց» (7, 12):

Ինչպես գիտենք, սուրբգրական շատ տեղիներ մեկնելու կարիք է գգացվել, ինչով էլ բացատրելի է բազմաթիվ մեկնությունների առկայությունը: Բայց, եթե աստվածաբանների գերակա խնդիրը եղել է ընթերցո-

³ Տե՛ս <https://biblehub.com/commentaries/genesis/23-11.htm>:

⁴ Միշտետական հարաբերությունների ասպարեզում երաշխավորի հանգամանքի վերաբերյալ տե՛ս P. G. LAUREN, *Diplomacy: New Approaches in History, Theory, and Policy*, Նյու Յորք–Լոնդոն, 2013, էջ 92–101, R. COHEN, *Negotiating Across Cultures: International Communication in an Interdependent World*, Վաշինգտոն, 1997, էջ 133–140, A. WATSON, *Diplomacy: The Dialogue Between States*, Նյու Յորք–Լոնդոն, 1982, էջ 141–145, M. N. SHAW, *International Law*, Քեմբրիջ, 2017, էջ 914–917, J. CRAWFORD, *Brownlie's Principles of Public International Law*, Օսֆորդ, 2012, էջ 423–426, J. KLABBERS, *Treaty Law and Practice*, Քեմբրիջ, 2009, էջ 53–58, A. AUST, *Modern Treaty Law and Practice*, Քեմբրիջ, 2013, էջ 79–83, В. М. Кручинин, *Дипломатическое право*, Մոսկվա, 2011, էջ 146–151, А. Н. ТАЛАЛАЕВ, *Право международных договоров*, Մոսկվա, 2009, էջ 102–108, Ю. М. КОЛОСОВ, В. И. КУЗНЕЦОВ, *Международное право*, Մոսկվա, 2014, էջ 312–316:

⁵ Բանակցային կողմերի միջև համարժեք դիմելաձեւերի կիրառման կապակցությամբ տե՛ս G. R. BERRIDGE, *Diplomacy: Theory and Practice*, Բազինգտոն – Նյու Յորք, 2015, էջ 156–158, A. James, *Diplomacy in Practice*, Լոնդոն, 1980, էջ 64–67, R. COHEN, *Negotiating Across Cultures: International Communication in an Interdependent World*, Վաշինգտոն, 1997, էջ 89–94, Christer Jönsson, *Diplomacy, Communication and Signaling*, London, 2011, էջ 102–105, United Nations, *Protocol and Liaison Service: Protocol Manual*, Նյու Յորք, 2016, էջ 21–23, Министерство иностранных дел РФ, *Дипломатический протокол и этикет*, Մոսկվա, 2014, էջ 45–48, И. В. СЕМЁНОВ, *Дипломатический этикет и протокол*, Մոսկվա, 2007, էջ 32–36:

դին-հավատացյալին հատվածի ընկալման ճիշտ ուղղութիւն մատնանշելը, որը պիտի ամբողջովին տեղավորվեր տվյալ մեկնիչի դավանաբանական սկզբունքների շրջանակում, ապա դիվանագիտական տեսանկյունից Սուրբ Գիրքը դիտարկելիս ստեղծագործելու եւ երեւակայելու ազատութիւնը համեմատաբար լայն շրջանակով է ներկայանում, երբ թերեւս ընդունելի են անգամ տեսական վարժանքները: Այս դեպքում միեւնոյն հատվածը կարելի է քննել քիչ ալ դիրքերից: Օրինակ՝ առաջարկված եւ վճարված գումարը Աստվածաբանական տեսանկյունից չափազանց մեծ է համարվում⁶, բայց, սրան զուգահեռ, կան նաեւ տարբեր հիմնավորումներ, թե ինչու Աբրահամը չսակարկեց, այլ լսելուն պես «կշռեաց զարծաթն», այսինքն՝ վճարեց պահանջվածը: Դիտելի է, որ գլխում առկա որոշակի տարրեր եւս դիվանագիտական ետնախորքի տպավորութիւն են թողնում: Օրինակ՝ երբ Եփրոնն Աբրահամին ասում է. «Լսել եմ, որ հողամասը չորս հարյուր սատեր արծաթ արժե» անմիջապես հավելելով. «Դա ի՞նչ է, որ իմ ու քո միջեւ»:

Նախ՝ մտորումների տեղիք է տալիս այն հարցը, թե ումից կարող էր հողակտորի գին լսել Եփրոնը: Մեր կարծիքով՝ լիովին հավանական է, որ տվյալ տեղեկութիւնը նա կարող էր ստանալ այն անձից կամ անձանցից, ովքեր դրա վաճառքի մասին խոսելու առիթ պիտի ունենային, իսկ դիտարկվող գլխի շարադրանքից պարզ է, որ այդ գործը կարող էին ստանձնել Քետի որդիները, որոնց հենց Աբրահամ նահապետն էր պատվիրել, որ խոսեն Եփրոնի հետ: Այստեղ, թվում է, թե «բանակցային գործընթացը» նախապատրաստելու դասական օրինակի ենք ականատես լինում, երբ բանակցող կողմերն անձանոթ են կամ բավարար շփում չեն ունեցել նախկինում, սակայն, այդուհանդերձ, գիտակցվում է անմիջականորեն շփվելու անհրաժեշտութիւնը, ուստի, շահագրգիռ կողմը դիմում է մի երրորդ կողմի օգնութեանը, նրան առաջարկելով, որ հաղորդակցվի հետաքրքրութեան առարկա հանդիսացող անձի հետ եւ նրան կանխապես ներկայացնի բանակցութեան առիթ հարցը կամ հարցերը⁷:

⁶ KEIL AND DELITZSCH BIBLICAL COMMENTARY ON THE OLD TESTAMENT . «The shekel of silver “current with the merchant,” i.e., the shekel which passed in trade as of standard weight, was 274 Parisian grains, so that the price of the piece of land was 52, 10s., a very considerable amount for that time». <https://biblehub.com/commentaries/genesis/23-9.htm>

⁷ Այս կապակցութեամբ տես WILLIAM ZARTMAN AND SAADIA TOUVAL, “International Mediation in Theory and Practice”, *Journal of Peace Research* 21, № 2 (1984): 172–185, G. R. BERRIDGE, *Diplomacy: Theory and Practice* (London: Palgrave Macmillan, 2015), HAROLD H. SAUNDERS, “Prenegotiation and Circumstances of Negotiation”, in *Getting to the Table* (Baltimore:

Հիշենք ուշագրավ եւս մի պահ. թեեւ Աստվածաշնչում որեւէ ակնարկ չկա առ այդ, սակայն կասկած է ծագում՝ մի՞թե Քետի որդիներն անշահախնդիր պիտի ստանձնեին Սահառի որդի Եփրոնին Աբրահամի մասին «բարեխոսելու» գործը:

Այստեղ, բնականաբար, ընդհանուր ձեւակերպում չի կարելի սահմանել բոլոր նման դեպքերի համար, որովհետեւ պատմական ամեն օրինակ ինքնակերպ եւ առանձնահատուկ է, ուստի, հավանաբար զուտ օգտակար կարող է լինել դիվանագիտական նմանատիպ փորձի դիտարկումը: Ըստ այսմ, միջնորդ երրորդ կողմի ներգրավումը միջնադարյան եւ ժամանակակից դիվանագիտության մեջ երբեւէ հիմնված չի եղել անշահախնդրության, ուստի եւ անկողմնակալության սկզբունքների վրա: Տեսական եւ պատմագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջնորդները սովորաբար չեն ակնկալել դրամական ուղղակի շահ, սակայն, որպես կանոն, ղեկավարվել են քաղաքական ազդեցության ընդլայնման, տարածաշրջանային անվտանգության ապահովման, միջազգային հեղինակության բարձրացման կամ տնտեսական արտոնություններ ձեռք բերելու մղումով⁸: Հետեւաբար, այս համապատկերում Քետի որդիների ներգրավվածության մասին մեր կասկածներն ամբողջապես տեղին են դիվանագիտության պատմության եւ տեսության դիրքերից: Իսկ ընդհանուր պատկերն ի մի բերելով՝ կարող ենք արձանագրել, որ դիվանագիտական առումով Աբրահամ նահապետի գործունեությունը ներկա գլխում լիովին արժեւորելի է. նա կանխավ ճշգրիտ ինքն իր համար ուղենշել էր իր նպատակը, առանձնացրել դրան հասնելու եղանակը եւ ի վերջո հաջողությամբ պսակեց այն: Եւ այստեղ Աբրահամի «դիվանագիտական գործունեության» միակ «ձախողում» կարող է դիտվել աստվածաբանների մատնանշած բարձր գինը, որ նահապետը վճարել էր լսելուն պես կամ «երբ» լսել էր, ինչպես կարող ենք եզրակացնել գրաբարյան բնագրից՝ «Եւ իբրեւ լուաւ

Johns Hopkins University Press, 1985), JOHN WATKINS, “Toward a New Diplomatic History of Medieval and Early Modern Europe”, *Journal of Medieval and Early Modern Studies* 38, № 1 (2008):

⁸ Տե՛ս JACOB BERCOVITCH, *Mediation in International Relations* (London: Macmillan, 1992), WILLIAM ZARTMAN AND SAADIA TOUVAL, “International Mediation in Theory and Practice”, *Journal of Peace Research* 21, № 2 (1984): 172–185, G. R. BERRIDGE, *Diplomacy: Theory and Practice* (London: Palgrave Macmillan, 2015), JOHN WATKINS, “Toward a New Diplomatic History of Medieval and Early Modern Europe”, *Journal of Medieval and Early Modern Studies* 38, № 1 (2008), GERD ALTHOFF, *Family, Friends and Followers* (Cambridge: CUP, 2004), HAROLD SAUNDERS, “Pre-negotiation and Circumstances of Negotiation”, in *Getting to the Table* (1985):

Աբրահամ», որ աշխարհաբար թարգմանություն մեջ «Եփրոնին լսելուց հետո» ձեռագրումն է ստացել:

Ընդհանրապես, հայերեն դասական տարբերակի զուգադրումը այլևայլ թարգմանությունների հետ հետաքրքիր տարընթերցումներ է առաջարկում: Օրինակ՝ ներկա գլխի 16-րդ բանատողը. «Եւ իբրեւ լուաւ Աբրահամ յԵփրոնէ, կշռեաց զարծաթն Եփրոնի, զոր խօսեցան յականջս որդւոցն Քետայ, շորեքհարեւր սատեր արծաթոյ ընտրոյ վաճառականաց»⁹: Այստեղ «զոր խօսեցան յականջս որդւոցն Քետայ» հատվածը կարգալիս կարող ենք տեսնել, որ մեզ հասանելի լեզուներում անմիջականորեն ավելացված է նահապետի անունը կամ իրեն մատնանշող դերանուն (նա), որ պայմանավորված է լեզվական խնդիրներով. եթե եբրայեցերենն ու հայերենը զուտ բայական ձևով մատնանշում են, թե ով է կամ որ դեմքի է գործողություն կատարողը, ապա անգլերենի ու ռուսերենի պարագային ենթակայի առկայությունը պարտադիր է¹⁰, այլապես բայական ձևը չի արտահայտում այդ իմաստը: Բայց, առավել ուշագրավ է լեզվական այն իրողությունը, ըստ որի՝ շարակարգից կարելի է ենթադրել, թե գինը սահմանողն անձամբ Աբրահամն է, որովհետեւ, ինչպես կարելի է ենթադրել, վճարեց այն գումարը, որ ասել էր (խոստացել) էր: Այդ դեպքում, հարց կառաջանա, թե ինչո՞ւ Աբրահամն ինքն իր համար պիտի բարձր գին սահմաներ: Այս կապակցությամբ, դիտելի է, որ գերեզման, շիրմավայր, քարայր կամ զույգ քարայր փոփոխաբար կիրառվող եզրերի վերջնական բնորոշումը ազատակն է. «Եփրոնի ազարակը, որ Մամբրէի կաղնուհանդիպակաց զոյգ քարայրի մօտն էր, այսինքն ազարակն ու նրա մէջ գտնուող քարայրը, ազարակի եւ նրա շրջակայքի բոլոր ծառերը դարձան Աբրահամի սեփականությունը, Քետի որդիների ներկայութեամբ, որոնք մտնում էին քաղաքի դարպասով: Դրանից յետոյ Աբրահամն իր կին Սա-

⁹ Տե՛ս ռուսերեն սինոդական «Авраам выслушал Ефрона, и отвесил Авраам Ефрону серебра, сколько он объявил вслух сынов Хетовых, четыреста сиклей серебра, какое ходит у купцов», անգլ. Նոր Քինգ Ջէյս տարբերակը՝ New King James Version. «And Abraham listened to Ephron, and Abraham weighed out the silver for Ephron which he had named in the hearing of the sons of Heth, four hundred shekels of silver, currency of the merchants» հմմտ. նաեւ հատվածի տողացին՝ <https://biblehub.com/interlinear/genesis/23-16.htm>:

¹⁰ Հմմտ. «he had named» ձևը, ուր առանց «he» դերանվան անկարելի է գուշակել, թե ով է գործողություն կատարողը, որովհետեւ նույն հաջողությամբ կարելի է ասել՝ I, You, She, անգամ՝ it had named: Նույնը նաեւ ռուսերենում, որի պարագային՝ «и отвесил Авраам Ефрону серебра, сколько он объявил вслух сынов Хетовых» տողում Авраам հատուկ անունն ու օն դերանունը կիրառվել են նպատակային, որպեսզի մատնանշեն, թե ով է ենթական:

ուային թաղեց ազարակի գոյգ քարայրում, որ Մամբրէի կաղնու դիմաց էր գտնուում, այսինքն՝ Քեբրոնում Քանանացիների երկրում: Ագարակն ու նրա մէջ գտնուող ֆարայրը Քետի որդիների կողմից (այսպ.) տրուեցին Աբրահամին իբրեւ նրա սեփական գերեզմանոց»: Այսինքն՝ բացահայտ է, որ Աբրահամի գնումն անհամեմատ ավելին է, քան շիրմավայր, քարայր, կամ գոյգ քարայր ասածը: Բնականաբար, այդ «ապրանքատեսակի» համեմատ ազարակի գինը պետք է բարձր լիներ: Բայց, եւս մի հանգամանք է այստեղ առկա. Սառան վախճանվեց «ի քաղաքի Արբոկայ ի ձորն այն ինքն է Քեբրոն» կամ ըստ բառարանի՝ «Արբա, մին ի նախնեաց Ենակայ եւ հիմնիչ Քեբրոնի, որ առաջ կը կոչուէր այս անձին անուամբ՝ Արբայի քաղաք, Յես. ԺԵ. 13»¹¹: Անկարելի է անտեսել, որ Աբրահամը քանանացիների երկրում օտար է՝ «պանդուխտ եւ նժդեհ եմ ես ի միջի ձերում» (տող 4), հետեւաբար, իր գնումը ժամանակակից ընկալմամբ «քաղաքացիություն» ստանալու պես մի բան է: Ինչպես նկատված է այս առիթով՝ «Աբրահամը շեշտում է իր կարգավիճակը, քանի որ դա հաջորդող խնդրի հանգուցալուծման հետնախորքն է. բնակություն հաստատած օտարերկրացին չէր կարող անշարժ գույք ձեռք բերել»¹²: Այս դիտարկումների լույսի ներքո կարելի է նկատել, որ աստվածաբանական տեսակետից «բարձր» գինը դիվանագիտական համապատկերում այլ իմաստավորում է ստանում, ուստի, կարելի է հանգել հետեւյալ եզրակացությունների. Աբրահամ նահապետն ուներ առաջնային նպատակ. այն է՝ Սառայի վերջին հանգրվանի համար պատշաճ տեղ գտնել: Սակայն, հրեթացս այս հարցի լուծման, նա կարգավորեց եւս մի՝ հույժ կարեւոր խնդիր, այն է՝ պանդուխտ օտարական կարգավիճակով հանդերձ, հողատեր դառնալու իրավունք ստացավ: Այս համապատկերում Ծննդոց գրքի ԻԳ. գլուխը դիվանագիտական տեսանկյունից ընկալելի է իբրեւ մի պատում, որի գլխավոր գործող անձ հանդիսացող Աբրահամ նահապետը «պատվիրակների» միջոցով անձամբ կազմակերպեց «բանակցային» գործընթացը, ուղենշեց եւ իրագործեց իր

¹¹ Տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Կոստանդնուպոլիս, 1881:

¹² Տե՛ս NAHUM M. SARNA, Genesis Chapter 23: the Cave of Machpelah, Institute of Advanced Studies Hebrew University-Jerusalem, (Editor's Note: This article is a chapter from the author's forthcoming commentary on Genesis, published here through the courtesy of the publisher, the Jewish Publication Society of America.), https://www.jstor.org/stable/27908757?read-now=1&seq=1#page_scan_tab_contents էջ 19 «Abraham mentions his status because it is the background to the request that follows, a resident-alien was unable to purchase real estate»:

նպատակները ձեռքբերված համաձայնությունը վավերացրեց «երաշխավորների» ներկայությամբ՝ անգամ «գնագոյացումն» իրականացնելով իր շահերի համապատասխանությամբ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Դիվանագիտություն, Ծննդոց ԻԳ, Արրահամ, Եփրոն, Զետացիներ, Բանակցություն, միջնորդություն, երաշխավորներ, դարպաս-ատյան, անշարժ գույքի գնում:

РЕЗЮМЕ

Настоящее исследование посвящено рассмотрению проявлений дипломатии в библейском повествовании на материале 23-й главы Книги Бытия, описывающей переговоры Авраама с Ефроном хеттеянином о покупке пещеры Махпелы для погребения Сарры. В отличие от сугубо богословских интерпретаций, данный эпизод анализируется с позиций теории и истории дипломатии. В тексте выявляются характерные элементы переговорного процесса: участие посреднической третьей стороны, предварительная подготовка контактов, публичный характер сделки, наличие свидетелей как гарантов соглашения и символическое оформление правового акта. Поведение Авраама свидетельствует о целенаправленной дипломатической стратегии, направленной не только на решение частной задачи погребения, но и на получение законного статуса землевладельца на территории иностранного народа. Высокая цена, уплаченная за участок, получает иное истолкование в дипломатико-правовом контексте, где она выступает как средство легитимации и закрепления прав. Сделан вывод о том, что анализируемый библейский текст отражает ранние формы дипломатического мышления и может рассматриваться как важный источник для изучения становления дипломатической практики в древности.

SUMMARY

This study examines the phenomenon of diplomacy as reflected in the biblical narrative, with particular focus on Genesis 23—the account of Abraham’s purchase of the burial cave of Machpelah from Ephron the Hittite. While traditionally interpreted within a theological framework, this episode is here analyzed through the lens of diplomatic theory and practice. The negotiation process reveals several elements characteristic of diplomacy: third-party mediation, strategic preparation for negotiations, the presence of witnesses as guarantors, and the formal approval of agreements in a public setting. Abraham’s behavior demonstrates a sophisticated form of negotiation aimed not only at securing a burial place for Sarah, but also at obtaining legal and social recognition as a landowner in a foreign community. The unusually high price paid for this property, which often raises questions in theological interpretations, takes on a different meaning when viewed in a diplomatic and legal context, reflecting broader goals related to status, legitimacy, and long-term settlement. Thus, the study argues that the biblical text preserves early models of diplomatic thinking and practice that can be viewed not only as a religious narrative but also as a valuable historical source for the study of proto-diplomacy.

